ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Տեքսուորլդ ՍՊԸ-ն ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԷԱՃԱՊՁԲ-26/26-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ3 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի			
	ֆիրմային անվանումը	ապրանքային նշանը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
1	Տեքսուորլդ ՍՊԸ	Տեքսուորլդ	Տեքսուորլդ	Բաճկոն՝ սեզոնային, անթև ՍՁ (ժիլետ ՍՁ գունաքողարկմամբ) ՀՀ ԱԱԾ սահմանապահ զորքերի, հաստատված գունավորմամբ, մուգ կանաչ և դեղնավուն երկգույն գունաքողարկող կտորով: Բաճկոնի երեսացուն ՛՛ռիպստոպ՛՛՝ ոչ պակաս 235 գրամ/մ2 մակերեսային խտությամբ, 65% պոլիէսթեր, 35% բամբակ(թույլատրվում է բամբակի պարունակությունը շատացնել մինչև 50%) բաղադրությամբ, ջրարտազատող նյութով ներծծված (ցանկալի է նաև, հրակայուն նյութերով ներծծված) գործվածքից: Գործվացքի բաղադրությունը՝ համաձայն ԳՈՍՏ 4659-79, ԻՍՕ 1833-2001, մակերեսային խտությունը՝ համաձայն ԳՈՍՏ 3811-72, ներկի կայունությունը՝ լվացման,թորած ջրի, քրտնքի և չոր շփման նկատմամբ, համաձայն ԳՈՍՏ 9733-83, նվազագույնը 4 բալ : Բաճկոնի ներդիրը

				մշակվում է անջրաթափանց շերտով, որը մգդակարված է 220-230 գրամ/մ2 մակերեսային խտությամբ սինտեպոնով: Աստառացուն՝ մուգ կանաչավուն գույնի է, շեղանկյուն կարվածքով (8սմ*8սմ զուգահեռ կարերով) մշակվում է ոչ պակաս 100-130 գրամ/մ2 մակերեսային խտությամբ արհեստական ֆլիսե գործվածքից: Բաճկոնը ներքին եզրից 5սմ վերևից մինչև օձիքի վերին եզրը կոճկվում է մուգ կանաչ գույնի կենտրոնական շղթայով (գլխիկները ամուր, դիմացկուն A դասի , տրակտոր տեսակի № 6) : Օձիքի վերին եզրին տեղադրված է շղթայի պաշտպանիչ գրպանիկ (արտաքինից՝ 3սմ, ներսից՝ 15 սմ երկարությամբ և 2.5 սմ լայնքով): Շղթայի վրայից, ժիլետի ստորին եզրից մինչև օձիքի ներքին եզրը մշակված է երկկողմանի սեպաձև կտրվածքով եզրեր ունեցող, 7 սմ լայնությունով, զարդակարված կափույրը (ներսից սոսնձակտորով ամրացված), որը ներսամասից՝ գաղտնի կոճկվածքով, կոճկվում է իրարից հավասարաչափ հեռավորության վրա մշակված 5 հատ մետաղական կոճգամներով (գլխիկը՝ 15մմ տրամագծով, YIK կամ YKK): Բաճկոնի կափույրի վրա վերևից 15-ից 16 սմ դեպի ներքև ամրացվում է 4,8 սմ լայնությամբ և 12-ից 12,5 սմ երկարությամբ պատա՝ կոչման տարբերանշանի համար: Պատայի ներքևի ծայրը սեպաձև, որը եզրաշերտին ամրանում է ինքնակպչունով: Ձինվորական կոչումով ուսադիրները (8.0-8,5 սմ երկարությամբ և 5,2 սմ լայնությամբ երեսացու գործվածքից, հանովի օղագոտի՝ ասեղնագործ ուսադիր) ասեղնագործվում են ըստ Պատվիրատուի կողմից

				ներկայացված համապատասխան քանակներով զինվորական կոչումների: Բաճկոնի օձիքը հետնամասում զարդակարված է շեղանկյուն կարերով, ներսից երեսպատված է մուգ կանաչավուն գույնի, աստառացուի մուգ կանաչավուն ֆլիսե կտորով: Օձիքի բարձրությունը մեջտեղում 8-9 սմ է, եզրերում՝ 10-11 սմ լայնությամբ: Օձիքի և բաճկոնի թիկնամասի միացման կարում, ներսի կողմից մշակված է ամուր կախիչ: Առաջամասում մշակված են վրադիր չորս գրպաններ՝ կափույրներով, որոնցից երկուսը կրծքամասում, իսկ երկուսը գոտկատեղից ներքև՝ կողային մասերում: Գրպանների կափույրների եզրերը թեք կտրվածքներով են: Կրծքամասի ձևավոր գրպանների լայնությունը 15 սմ, երկարությունը 17 սմ կափույրի հետ միասին, կափույրի լայնությունը 6սմ, գրպանները տեղակայված են կենտրոնական ուղղահայաց շղթայից աջ և ձախ 5.5-6 սմ՝ 48-56 չափսերի համար (58 - 60 չափսերինը՝ 6,5-7,0սմ) հեռավորության վրա: Ձախ գրպանին վրակարված է, ևս, կափույրով, մեկ փոքրիկ գրպանիկ, որը կոճկվում է կենտրոնական կոճգամով: Առաջամասի կողային, ձևավոր վրադիր գրպանների լայնությունը 18,5 սմ, երկարությունը 21 սմ՝ կափույրի հետ միասին, կափույրի լայնությունը 7 սմ: Կողային գրպանները տեղադրված են բաճկոնի ստորին եզրից 2,5 սմ բարձրության վրա, գրպանները տեղակայված են կենտրոնական ուղղահայաց շղթայից աջ և ձախ 6-7 սմ հեռավորության վրա: Առաջամասի կողային վրադիր գրպանները՝ զույգ գրպաններ են, որոնք ունեն կողքից և վերևից մուտքեր: Կափույրները և վրադիր

				գրպանների եզրերը զարդակարված են 0,5սմ - 0,7սմ լայնությամբ: Կողքի զարդակարերը վրակարված են 0,1 սմ կարի լայնությամբ: Առաջամասի վերին զույգ գրպանների կափույրները և ստորին գրպանների կափույրները ամրանում են փակ գաղտնի կոճկվածքով, 15մմ տրամագծով մետաղական զույգ կոճգամներով: Բաճկոնի ֆլիսե աստառի ձախ (15,5սմ*18սմ չափսի) և աջ (15,5սմ*18սմ) կրծքամասերում երեսացուի կտորով, մշակված են զույգ ծոցագրպաններ, որոնք վերևից կոճկվում են շղթաներով: Բաճկոնի ուսագոտիների եզրերը (բերանը) ծալված և վրակարված են, ծալման լայնությունը պատրաստի վիճակում՝ 1,3-1,5 սմ: Գոտկատեղում մշակված են, 2,5 սմ լայնությամբ և 11,0-12,0սմ երկարությամբ ներկարված էլաստիկ ժապավեններ՝ իրանի չափսերի կարգավորման համար: Թիկունքամասի իջվածքը դեպի ներքև մշակված է 4 սմ-ով ավելի երկար (փեշերի միացման կարից շեղակի կտրվածքով), քան առաջամասի բարձրությունը, հաշվարկված ուսակարերից : Բաճկոնի վերին գրպանից վեր, առկա են ասեղնագործ 2.5*12.5սմ չափսի գրվածքներ՝ ձախ կողմում ՛՛ՀՀ ԱԱԾ՛՛, իսկ աջ կողմում ՛՛ՍԱՀՄԱՆԱՊԱՀ ԶՈՐՔԵՐ՛՛ : Ուսադիրը պարկանման է 5,2 սմ*8,0 սմ չափսի, վրան զինվորական կոչումների ասեղնագործմամբ: Բաճկոնի արտաքին տեսքը՝ ըստ Պատվիրատույի կողմից ներկայացված նմուշի: Փաթեթավորումը՝ պոլիէթիլենային ամուր պարկերով ՝ յուրաքանչյուրում առավելագույնը 5 հատ, պարկերը փակված և թղթային պիտակով պիտակավորված: Պիտակավորումը: Բաճկոնի ներսի կողմից փակցվում են

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ООО Тексуорлд в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ԱԱԾ-ՏՇՏՎ-ԷԱՃԱՊՁԲ-26/26-ՀԱՆԴԵՐՁԱՆՔ3 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар			
	фирменное наименование	товарный знак	наименование производителя	технические характеристики
1				
				պիտակներ, վրան նշված՝ չափս-հասակի, ապրանքի անվան, արտադրողի, պայմանագրի կոդի, արտադրման տարեթվի և համազգեստի խնամքի վերաբերյալ գրառումներով (նաև, սիմվոլներով), տառաչափի չափսը նվազագույնը 10 : Պարկերը պիտակավորված են, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, արտադրող և/կամ մատակարար կազմակերպության անվանումը, արտադրման տարեթիվը: Բոլոր չափսերի թույլատրելի շեղումը 3%: Ժիլետի արտաքին տեսքը՝ համաձայն Պատվիրատուի կողմից ներկայացված նմուշի: Չափս հասակային (42/2 - 74/6), (չափսերի եվրոպական սանդղակով՝ XS - 5XL) և կոչումային (սերժանտական, ավագ ենթասպայական և սպայական) տվյալները Կատարողին կտրամադրվեն պայմանագրի կնքումից հետո: Ապրանքը ընդունվում է , ՀՀ-ում կամ արտերկրում հավատարմագրված կազմակերպության կողմից տրված, տեխնիկական պայմանների ցուցանիշների, լաբորատոր հետազոտության եզրակացության և/կամ կտորի սերտիֆիկացման փաստաթղթերի առկայության դեպքում: Սերտիֆիկացման փաստաթղթերում պետք է նշված լինի գործվածքի բաղադրության, ներկի կայունության՝ քրտնքի, լվացքի, չոր շփման չափանիշներով, մակերեսային խտության և տեխնիկական բնութագրում նշված այլ չափորոշիչների համապատասխանությունը (եթե այդպիսիք բնութագում առկա են):